

«Հաստատում եմ»
ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտորի
Ժամանակավոր պաշտոնակատար
Մ.Արարայան
«23» 2025թ.

Կ Ա Ր Ծ Ի Ք

Առաջատար կազմակերպության՝ ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի՝

Մարթա Էդուարդի Մելիքսեթյանի՝ «Երեխայի դաստիարակության և խնամքի
պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու քրեաիրավական և
քրեաբանական հիմնախնդիրները» թեմայով ԺԲ. 00.05 - «Քրեական իրավունք և
կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ
իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության վերաբերյալ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության
ամբիոնը՝ մասնակցությամբ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Գ.Թ.Գրիգորյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Մ.Մ.Մարկոսյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Հ.Մ.Խաչատրյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Դ.Ա.Թումասյանի, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Ս.
Մելիքսեթյանի քննարկեց Մարթա Էդուարդի Մելիքսեթյանի՝ «Երեխայի
դաստիարակության և խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ
կատարելու քրեաիրավական և քրեաբանական հիմնախնդիրները» վերառաջությամբ
իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսությունը և հանգեց հետևյալին:

Մ. Մելիքսեթյանի ատենախոսության թեմայի արդիականությունը կասկած չի
հարուցում:

Երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու քրեաիրավական և քրեաբանական հիմնախնդիրները հանդիսանում են երեխաների պաշտպանության քրեական քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը՝ պայմանավորված ինչպես երեխաների նկատմամբ հանցավոր արարքների աճով, այնպես էլ քննարկվող հանցավոր արարքներին համարժեք քրեաիրավական արձագանքի անհրաժեշտությամբ: Երեխան, որպես հասարակության ամենախոցելի անդամներից մեկը, պահանջում է հատուկ պաշտպանություն և հոգաժողություն, ինչն ամրագրված է ինչպես միջազգային փաստաթղթերում (ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոնվենցիա, Մարդու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության Եվրոպական կոնվենցիա և այլն), այնպես էլ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում:

Սակայն գործնականում հաճախ արձանագրվում են դեպքեր, երբ ծնողներն ու այլ օրինական ներկայացուցիչները չեն կատարում իրենց պարտավորությունները կամ ոչ պատշաճ են կատարում, ինչը կարող է հանգեցնել երեխայի զարգացման պայմանների վատթարացման, կրթության սահմանափակման, առողջության և բարոյահոգեբանական անվտանգության վնասման կամ այլ հետևանքների: Այս ամենը ոչ միայն խախտում է երեխայի իրավունքները, այլ նաև ազդում է ապագա սերունդների՝ որպես առողջ, կրթված և լիարժեք անհատների ձևավորման վրա, ինչն իր հերթին երկարաժամկետ բացասական ազդեցություն է ունենում հասարակության զարգացման վրա:

Միաժամանակ, քրեաիրավական դաշտում երեխաների պաշտպանության ոլորտը դեռևս պահանջում է համակարգային որոշակի վերանայում: ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածների կիրարկումը հաճախ զուգորդվում է մեկնաբանությունների անորոշությամբ, ինչն առաջացնում է խտրական մոտեցումներ իրավակիրառ պրակտիկայում: Բացի այդ, առկա են լուրջ քրեաբանական խնդիրներ՝ կապված տվյալ արարքների պատճառահետևանքային կապերի բացահայտման, հանցավոր վարքագծի կանխատեսման և կանխարգելման մեթոդների արդյունավետության հետ:

Նման պայմաններում թեմայի գիտական վերլուծությունն ունի ինչպես տեսական, այնպես էլ գործնական բարձր արժեք: Այն նպաստում է քրեաիրավական և քրեաբանական մեխանիզմների բարելավմանը, օրենքների կիրառման արդյունավետության բարձրացմանը և, ամենակարևորը՝ երեխայի իրավունքների քրեաիրավական համապարփակ պաշտպանությանը: Ուսումնասիրության արդյունքները կարող են հիմք ծառայել օրենսդրական բարեփոխումների, ինչպես նաև իրավապահ և սոցիալական ծառայությունների գործունեության կատարելագործման համար:

Վերոնշյալի համատեքստում, ատենախոսության ուսումնասիրության արդյունքում, ներկայացվում են հետևյալ դիտողությունները.

1. Ատենախոսը հետազոտության ներածության մեջ նշել է, որ ուսումնասիրելով ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածով նախատեսված դետերմինանտները, ինչպես նաև դրա բացահայտմանը, հայտնաբերմանն ու կանխարգելմանն ուղղված օրենքով նախատեսված ներկայիս մեխանիզմները, պետք է արձանագրել, որ դրանք թերի են և կատարելագործման ենթակա, մասնավորապես՝ բացակայում են միջգերատեսչական համագործակցության հստակ ընթացակարգերը, իսկ իրականացվող գործընթացներն արդյունավետ չեն:

Հարկ ենք համարում նշել, որ դետերմինանտներն այն գործոններն են, որոնք ազդում են հանցավորության առաջացման, տարածման և զարգացման վրա, այլ կերպ ասած՝ հանցավորության ծնող պատճառներն ու պայմաններն են և ոչ մի կերպ չեն նույնանում արարքի պատճառահետևանքային կապի հետ, ավելին դրանք չեն նախատեսվում ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի հոդվածներում:

Բացի այդ, որոնք են նշված հանցագործության բացահայտմանը, հայտնաբերմանն ու կանխարգելմանն ուղղված օրենքով նախատեսված մեխանիզմները և ինչու՞մն է արտահայտվում դրանց ակնհայտ թերի լինելը, ինչպես նաև, որոնք են այդ ուղղությամբ իրականացվող գործընթացները և ինչու՞մն է արտահայտվում դրանց ոչ բավարար արդյունավետությունը: Առավել ևս, որ ՀՀ-ում երեխաների իրավունքների պաշտպանության ազգային ծրագրի համաձայն հատուկ ուշադրություն է դարձվում երեխաների պաշտպանության ոլորտում միջազգային չափանիշների ներդրմանը և այդ

նպատակով ազգային օրենսդրության համապատասխանեցմանը միջազգային իրավական ակտերին: Գործում են «Իմ իրավունքը», «Օրրան», «Երեխաների առողջության պահպանման ասոցիացիա», «Հույսի կամուրջ» և այլ հասարակական կազմակերպություններ, այդ ոլորտում ակտիվ գործունեություն է իրականացվել ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից: Ստացվում է, որ ատենախոսը բարձրաձայնում է մի խնդիր, որի լուծումը փաստացի չի ներկայացնում՝ թողնելով հարցը չկարգավորված:

2. Ատենախոսն իր պաշտպանության ներկայացվող 3-րդ դրույթում առաջարկում է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 41-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանել «դաստիարակություն» և «խնամք» եզրույթները:

Պետք է նկատել, որ այս դրույթը քրեաիրավական առումով նշանակություն չունի և այն իրենից ավելի շուտ ներկայացնում է առաջարկություն, բայց ոչ պաշտպանության դրույթ:

Բացի այդ, 2024 թվականի հոկտեմբերի 24-ի «Սոցիալական աջակցության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասում արդեն սահմանված է «խնամք» եզրույթը, որը ներկայացված է հետևյալ կերպ. «խնամքը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձին կամ երեխային կամ սույն հոդվածով նախատեսված այլ անձանց ընտանեկան միջավայրին առավել մոտ սոցիալ-կենցաղային պայմաններ ապահովելու կամ տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձին կամ երեխային իր սոցիալական միջավայրում պահելու կամ հասարակությունում ներառելու նպատակով անհրաժեշտ օգնությունն է»: Սույն եզրույթը ոչ միայն չի քննարկվել ատենախոսությունում, այլ նաև ներկայացվել է տարբերվող եզրույթ՝ չհիմնավորելով այն բնութագրող հատկանիշները:

3. Ատենախոսն իր պաշտպանության ներկայացվող 3-րդ դրույթում առաջարկում է ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասում առկա «երեխայի առողջության վատթարացումը» եզրույթը փոխարինել «որն առաջացրել է երեխայի առողջությանը թեթև վնասի պատճառում» ձևակերպմամբ:

Հարկ ենք համարում նշել, որ ատենախոսի առաջարկն իրենից, ըստ էության, ներկայացնում է օրենսդրական փոփոխության առաջարկ, որը չի համապատասխանում օրենսդրական տեխնիկայի կանոններին, քանի որ նախ «երեխայի առողջության

վատթարացումը» եզրույթ չէ, այլ բառեր, բացի այդ բառերից առաջ օրենսգրքում առկա է նաև «հանգեցրել է» բառերը:

Միաժամանակ, պետք է նկատել, որ առողջության թեթև վնասի հատկանիշներն իրենցից ենթադրում են որոշակի նյութական հետևանքներ, որն, անխոս, ավելի ծանր է, քան առողջության վատթարացումը: Նման պայմաններում ստացվում է, որ հանցակազմի իմաստով՝ անձը պետք է կատարած լինի կամ գերծ մնա այնպիսի արարք կատարելուց, որը կարող է երեխայի առողջությանը վնաս պատճառել: Այսինքն, ստացվում է մի իրավիճակ, որ սույն փոփոխությունն իրենից ենթադրում է հանցակազմով նախատեսված հետևանքների խստացում, որը չի բխում երեխայի իրավունքների արդյունավետ պաշտպանությունից և վերջինիս լավագույն շահից:

Օրինակ, երեխայի առողջությանը թեթև վնասի հատկանիշներ չպարունակող հետևանքների պատճառումը չի համարվի քննարկվող հանցակազմի հետևանք և չի հանգեցնի քրեական պատասխանատվության:

4. Ատենախոսը, պաշտպանության ներկայացվող 5-րդ դրույթում առաջարկում է ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածը շարադրել հետևյալ բովանդակությամբ.

1. Ծնողի, այլ օրինական ներկայացուցչի կամ այն անձի կողմից, ում վրա օրենքով սահմանված կարգով դրված է երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը, կամ փաստացի խնամք և դաստիարակություն իրականացնող անձի կողմից այդ պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը, որն առաջացրել է երեխայի առողջության թեթև վնասի պատճառում՝

2. Նույն արարքը, որը

1) կատարվել է անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ,

2) զուգորդվել է երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունքով:

....

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասերով նախատեսված հանցանքները, որոնք

Անգգուշությամբ առաջացրել է երեխայի մահ կամ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնասի պատճառում, կամ հանգեցրել է այլ ծանր հետևանքի առաջացման,

.....:

4. Սույն հոդվածի իմաստով՝ անօգնական վիճակում գտնվող է համարվում հանցավորին դիմադրություն ցույց տալու կամ իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը գիտակցելու հնարավորությունից զրկված անձը կամ 12 տարին չլրացած անձը:

Առաջին հերթին նկատենք, որ պաշտպանության ներկայացվող 3-րդ և 5-րդ դրույթները հարաբերակցվում են, ինչպես ամբողջ ու մաս և արդյունքում ստացվում է կրկնաբանություն, քանի որ 3-րդ դրույթն ամբողջությամբ ներառված է 5-րդ դրույթում: Ուստի կանդիդատանք դրույթում մատնանշված մյուս փոփոխության առաջարկին, որը վերաբերելի է հոդվածի դիսպոզիցիայում փաստացի խնամք և դաստիարակություն իրականացնող անձի ներառմանն ու հանցակազմի ծանրացնող հանգամանքներին: Մասնավորապես, հոդվածի 2-րդ մասում առաջարկվում է նախատեսել նոր ծանրացնող հանգամանք, այնն է՝ կատարվել է անօգնական վիճակում գտնվողի նկատմամբ, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը, որպես առանձնապես ծանրացնող հանգամանք՝ նախատեսելով հոդվածի 3-րդ մասում: Այնուհետև 4-րդ մասով էլ սահմանում է՝ ով է համարվում անօգնական վիճակում գտնվող սույն հոդվածի իմաստով:

Նախ՝ կարծում ենք, որ նման փոփոխության առաջարկն իմաստագուրկ է, քանի որ երեխան մինչև 12 տարեկանը՝ ինքնին անօգնական վիճակում գտնվող անձ է, ինչը սահմանված է ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, որի համաձայն՝ **անօգնական վիճակում գտնվող** է այն անձը, որն իր ֆիզիկական կամ հոգեկան վիճակով պայմանավորված ի վիճակի չէ դիմադրություն ցույց տալ կամ ղեկավարել իր արարքը կամ գիտակցել իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը, ինչպես նաև 12 տարին չլրացած անձը: Իսկ առաջարկի իմաստով՝ հանցավորին դիմադրություն ցույց տալու հնարավորությունը երեխայի կողմից անհասկանալի է՝ թե գործնականում սույն հանցակազմի իմաստով ինչպիսի իրավիճակում պետք է կամ հնարավոր է դիմադրություն ցույց տալու հավանականություն առաջանա երեխայի մոտ: Ակամա ստացվում է, որ ներկայացված առաջարկով մինչև 12 տարեկան երեխաների դեպքում մշտապես լինելու ծանրացնող հանգամանք, այն դեպքում, որ այս

հանցագործությունը վերաբերում է բացառապես երեխաներին, այլ ոչ թե անձանց առհասարակ, որպիսի պայմաններում հնարավոր կլինե՞ր կիրառել ներկայացված տարբերակումը՝ ապահովելով նաև ՀՀ քրեական օրենսգրքի այլ հոդվածների ձևակերպումների հետ միատեսակությունը:

Հեղինակը, որպես հանցագործության սուբյեկտ նշել է նաև փաստացի խնամք և դաստիարակություն իրականացնող անձանց, ինչը պետք էր քննարկել ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի համատեքստում, որի համաձայն՝ անգործությամբ կատարված արարքը քրեական պատասխանատվություն է առաջացնում, եթե անձի վրա իրավական ակտով դրված է եղել գործողություն կատարելու պարտականություն, կամ այդ պարտականությունը բխել է նրա ստանձնած պարտավորությունից կամ բխել է օրենքով պաշտպանվող շահերը վտանգի ենթարկված կամ դրանց վնաս պատճառած իր նախորդ վարքագծից: Հետևաբար, պարտականությունների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումն այն անձի կողմից, ով չունե՞ր ստանձնած նման պարտավորություն, որն առնվազն պետք է ամրագրված լինի խնամակալության կամ հոգաբարձության մարմնի կողմից կամ սահմանվի օրենքով կամ այլ իրավական ակտով, չի կարող առաջացնել քրեական պատասխանատվություն:

5. Ատենախոսի կողմից երեխային ծնողից վերցնելու հարցում ոստիկանության ծառայողներին լիազորություն տալը գիտական նորույթ համարելը ճիշտ չէ, հետևաբար պաշտպանության ներկայացված 6-րդ դրույթը պետք է համարել առաջարկություն կամ կարծիք: Սակայն, այդ կարծիքն էլ հիմնավորման կարիք ունի, և խնամակալության և հոգաբարձության մարմնի գործառույթն այդ մարմնից ոստիկանության փոխանցումը հիմնավորելիս անհրաժեշտ է ոչ միայն առաջնորդվել անձնական պրակտիկայով, այլ նաև խորը վերլուծության ենթարկել այլ պետությունների օրենսդրությունը և գնահատել այն ռիսկերը, որոնք կարող են առաջանալ՝ ոստիկանության ծառայողին ոչ ոստիկանական գործառույթով օժտելով:

6. Ատենախոսության 19-րդ էջում ատենախոսը հղում է կատարում Нечаева А. М. Семейное право. Курс лекций. 2-е изд. - М., 2001, էջ 155 աղբյուրին, որը ներառված չէ օգտագործված գրականության ցանկում: Համանման խնդիրները բազմաթիվ են, և հեղինակը գրականության ցանկում նշում է Ն.Ռ Տոնոյանի աշխատությունը սակայն

որևէ հղում չի տրվում տեքստում, կամ որպես հայ հեղինակներ նշվում է Ա.Ս. Ղամբարյանը, սակայն նրա աշխատություններից որևէ մեկը նշված չէ հղման մեջ կամ գրականության ցանկում, և այլն:

Ավելին, վկայակոչելով թեմայի հիմնախնդիրներով զբաղվող հայտնի գիտնականների և այլոց աշխատանքները նշվել է, որ «կատարված ուսումնասիրությունների շրջանակներում մշակված գիտական դրույթները բավարար չեն, ինչը համապատասխան բարդություններ է առաջացնում իրավակիրառ մարմինների աշխատանքային գործունեությունում, ինչն էլ հանգեցնում է քննարկվող խմբի հանցագործությունների դեմ պայքարի, դրա կանխարգելման միջոցների անարդյունավետությանը»: Այստեղ, չի պարզաբանվել, թե ինչ ուսումնասիրությունների արդյունքում է արվել նշված հետևությունները, ինչով է, որ նշված գիտական դրույթները չեն բավարարում և բարդություններ են առաջացնում իրավակիրառ մարմինների աշխատանքային գործունեության մեջ և ազդում նշված հանցագործության կանխարգելման միջոցների արդյունավետության վրա:

7. Ատենախոսն 28-րդ էջում գրել է՝ «Ընտանիքի և երեխայի շահերի դեմ ուղղված հանցագործություններն իրենցից ներկայացնում են սոցիալական կառավարման անբաժանելի մասը և ենթադրում են բազմաթիվ սոցիալ-տնտեսական, իրավական, կազմակերպչական, դաստիարակչական և բժշկական բնույթի միջոցառումների իրականացում» միտքը:

Այստեղ առնվազն անհասկանալի է, թե ինչպես առհասարակ հանցագործությունները կարող են սոցիալական կառավարման մասը լինեն, հատկապես աշխատությունից պարզ չի դառնում, թե ատենախոսն ինչի արդյունքում է եկել նման եզրահանգման: Եթե ենթադրվում էր սոցիալական կամ հասարակական կարգավորման գործընթացը, ապա այն չի կարող ներառել բժշկական կամ այլ միջոցառումներ, որոնք նշել է ատենախոսը:

8. Ատենախոսը 1-ին գլխի 1.2 պարագրաֆը՝ Երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հանցակազմի օբյեկտիվ տարրերը և դրանց հատկանիշների սահմանման հիմնախնդիրները, բովանդակության մեջ նշել է 32 էջ, մինչդեռ այն հետազոտության 31-րդ էջից է սկսվում:

9. Աշխատանքի 30-րդ էջում հեղինակը խոսում է երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու քրեականացման հիմքերի մասին, ինչը ժամանակավրեպ է, քանի որ այդ արարքն արդեն քրեականացված է:

10. Ատենախոսը 1-ին գլխի 1.2 պարագրաֆում վերլուծելով երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հանցակազմի օբյեկտը՝ եզրահանգում է, որ այն բազմաօբյեկտ հանցագործություն է: Հիմնական օբյեկտը բնութագրում է այն հասարակական հարաբերությունը, որի պաշտպանության նպատակով ընդունվել է հիշյալ քրեաիրավական նորմը: Իսկ որպես լրացուցիչ անմիջական օբյեկտ հանդես է գալիս քրեաիրավական պաշտպանության ներքո գտնվող այն հասարակական հարաբերությունը, որին վնաս է պատճառվում կամ կարող է պատճառվել հիմնական օբյեկտի հետ համատեղ: ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածի պարագայում որպես այդպիսին հանդես են գալիս երեխային ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը, իսկ որպես լրացուցիչ օբյեկտ՝ երեխայի առողջությունը:

Ցանկանում ենք ընդգծել, որ երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու անմիջական հիմնական օբյեկտը երեխայի նորմալ ֆիզիկական, հոգեկան և սոցիալական զարգացումն ապահովող հասարակական հարաբերություններն են, իսկ որպես լրացուցիչ օբյեկտ հանդես են գալիս երեխայի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը կամ առողջությունը, և նշված երկու արժեքներն էլ գտնվում են քրեաիրավական պաշտպանության ներքո:

11. Ատենախոսն իր հետազոտության 34-37-րդ էջերում քննարկում է «երեխա» և «անչափահաս» եզրույթները՝ ներկայացնելով իրավունքի տարբեր ճյուղերի օրենսդրության մեկնաբանությունները, անչափահասների դասակարգման հիմքերը:

Հարկ ենք համարում նշել, որ այդ վերլուծությունն այս հետազոտության առումով նշանակություն չունի, քանի որ քննարկվող հանցակազմի առումով երեխան տուժողն է և արարքի քրեաիրավական գնահատականի համար երեխայի տարիքը նույնպես նշանակություն չունի:

12. Ատենախոսն իր հետազոտության 35-րդ էջում նշում է, որ ելնելով իրավունքի նորմերի միջնյուղային փոխգործման սկզբունքներից, քրեական իրավունքում «անչափահաս» եզրույթի ձևակերպումը խնդրահարույց է: Նշված խնդիրն իր լուծումը գտնում է իրավունքի մյուս ճյուղերի նորմերում:

Այստեղ հարկ ենք համարում նշել, որ ի տարբերություն նախկին ՀՀ քրեական օրենսգրքի՝ ՀՀ գործող քրեական օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասում հստակեցված է անչափահասի տարիքային սահմանները, ավելին տրված է անչափահասի հասկացությունը և հատկապես այս՝ քննարկվող հանցակազմի առումով հարկ չկա դիմելու իրավունքի մյուս ճյուղերին: Բացի այդ, ներկայացնելով «մանկահասակ» հասկացությունը և այն վերագրելով 12 տարին չլրացած երեխաներին, ատենախոսը միախառնում է այս եզրույթը «անօգնական վիճակում գտնվող» եզրույթի հետ և 14 տարին չլրացած երեխա «փոքրահասակ» եզրույթի հետ՝ առաջացնելով քաղաքացիական և քրեական իրավունքում կիրառվող եզրույթների խառնաշփոթ: Բացի այդ, ատենախոսը եզրահանգում է, որ հայրենական օրենսդրությունում կիրառվող անչափահաս և երեխա եզրույթները նույնական են: Վերջինիս կապակացությամբ ընդգծենք, որ ցանկացած անչափահաս երեխա է, իսկ ցանկացած երեխա անչափահաս չէ, քանի որ «անչափահասը» իրավական կարգավիճակ է, ինչը կարգավորված է ՀՀ օրենսդրությամբ, ներառյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասով:

13. Ատենախոսության 37-րդ էջում հետազոտողն անդրադարձ է կատարել «անօգնական վիճակ» հասկացությանը:

Պետք է նշենք, որ «անօգնական վիճակ» հասկացությունը քրեաիրավական առումով որևէ նշանակություն չունի և անհրաժեշտություն չկա դրա հասկացության քննարկումը: Միաժամանակ նշենք, որ անօգնական վիճակը վերաբերելի է բացառապես անձին և ՀՀ քրեական օրենսգիրքում ամրագրված է անօգնական վիճակում գտնվող անձի երկու հասկացություն, որից մեկը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգիրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ որպես ընդհանուր նորմ, որը վերաբերում է բոլոր հոդվածներին և ունենք մեկ բացառություն, որը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի 198-րդ հոդվածի 5-րդ մասով:

Քննարկման արդյունքում պարզ չէ, թե ինչ նպատակ էր հետապնդում ատենախոսն այս եզրույթը մեկնաբանելով:

14. Ատենախոսն էջ 64-րդ էջում քննարկելով հանցագործության սուբյեկտիվ կողմը՝ նշում է, որ այն հանցանք կատարած անձի հոգեկան գործունեությունն է՝ կապված հանցագործության հետ:

Պետք է նշենք, որ սուբյեկտիվ կողմը՝ չի կարող գործունեություն լինել, առավել ևս հոգեկան, այլ այն անձի հոգեբանական վերաբերմունքն է՝ իր կատարած արարքի և դրա արդյունքում առաջած հետևանքների կապակցությամբ:

15. Ատենախոսության տարբեր հատվածներում հեղինակը կիրառում է «հոգեկան տկարամտություն» և այլ եզրույթներ, որոնք իրենց բնույթով խտրական են և մասնագիտական գրականության մեջ վերջին 10 տարիներին չկիրառվող: Նշված ձևակերպումները փոխարինվել են «հոգեկան առողջության խնդիրներ» եզրույթով, որը կիրառվում է նաև նոր ընդունվող օրենսդրությունում:

16. Ատենախոսն առաջարկում է ՀՀ կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշման մեջ կատարել լրացում, նախատեսելով ԽՀՀ անդամների հերթապահություն՝ ոչ աշխատանքային ժամերին և հանգստյան օրերին, նպատակ ունենալով արագ արձագանքել: Նման առաջարկն իրավական տեսանկյունից անհնարին է, քանի որ հերթապահության պարտականությունը այն էլ հասարակական հիմունքներով գործող մարմնի համար ՀՀ կառավարության որոշմամբ սահմանվելն ապօրինի է: Ավելին, ներկայացված գաղափարն արդեն 2 տարի է գտնվում է նախագծման փուլում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից և ներառված է «Երեխայի իրավունքների և երեխայի պաշտպանության համակարգի մասին» օրենքի և հարակից օրենքների նախագծում, որը ներկայացվել է հանրային քննարկման 10.04.2023թ.-ին՝ <https://www.e-draft.am/projects/5592/about>, սակայն որին ատենախոսը որևէ անդրադարձ չի կատարել:

17. Առաջարկելով վերաշարադրել ՀՀ ընտանեկան օրենսգրքի 58-րդ հոդվածը, ատենախոսը կրկին հաշվի չի առել այդ ուղղությամբ իրականացվող օրենսդրական փոփոխությունների տեսլականը, ինչպես նաև բավարար հիմքով չի հիմնավորել իր առաջարկները:

18. Ատենախոսը 82-րդ էջում օգտագործում է «հանցագործ» բառը: Հարկ ենք համարում նշել, որ իրավագիտության մեջ նման եզրույթ գոյություն չունի և այն օգտագործելը կոռեկտ չէ և փոխարեն հարկ է օգտագործել «հանցանք կատարած անձ» եզրույթը:

19. Ատենախոսը 101-րդ էջում գրում է՝ «Քրեագիտության ընդհանուր տեսությունում հանցավորության պատճառներն ընկալվում են որպես «համապատասխան սոցիալ-տնտեսական ձևավորման համար բացասական սոցիալական երևույթների համակարգ, որոնք հանցագործությունը որոշում են որպես դրա հետևանք»»:

Նկատենք, որ Քրեագիտությունը՝ Կրիմինալիստիկան է, իսկ շարադրված մտքից պարզ է դառնում, որ ատենախոսը նկատի ունի Կրիմինալոգիան կամ Քրեաբանությունը: Բացի այդ, հանցավորության պատճառները միայն սոցիալ-տնտեսական կատեգորիա չեն և ընդհանուր միտքն էլ ունի վերաշարադրման կարիք:

20. Հետազոտության մեջ ատենախոսն պարբերաբար վկայակոչում է ինչ որ ուսումնասիրություններ, օրինակ՝ 103-րդ, 107-րդ էջերում, առանց ներկայացնելու՝ խոսքն ինչ ուսումնասիրությունների մասին է, ինչ պայմաններում և ում կողմից են կատարվել:

Նշված դիտողությունները կրում են սուբյեկտիվ բնույթ: Ատենախոսությունը կարող է դրվել հրապարակային պաշտպանության, իսկ հեղինակը՝ Մարթա Էդուարդի Մելիքսեթյանը, կարող է արժանանալ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման ԺԲ. 00-05 «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ:

Առաջատար կազմակերպության կարծիքը Մարթա Էդուարդի Մելիքսեթյանի՝ «Երեխայի դաստիարակության և խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու քրեաիրավական և քրեաբանական հիմնախնդիրները» թեմայով ատենախոսության վերաբերյալ պատրաստվել է ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման քրեական իրավունքի և քրեական դատավարության ամբիոնի պետի պարտականությունները կատարող, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ ոստիկանության փոխգնդապետ Հ.Մ.Խաչատրյանի կողմից: Քննարկվել և հավանության է արժանացել քրեական

իրավունքի և քրեական դատավարության ամբիոնի 2025թ. մայիսի 23-ի նիստում,
արձանագրություն № 4:

Ամբիոնի պետի պարտականությունները կատարող,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ոստիկանության փոխգնդապետ  Հ. Խաչատրյան

Հ.Խաչատրյանի ստորագրությունը հավաստում եմ:

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի վարչական աշխատանքները
համակարգող պրոռեկտոր  